

**«Առարկայական խորագրերի» և «Աշխարհագրական անվանումների»
շտեմարանների ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքների
ներկայացում**

**Անի Սևանյան
Հայաստանի ազգային գրադարան**

Տեխնոլոգիական նոր միջոցների ներգործությունը հասարակության վրա ավելի ծանրակշիռ է, քան էլեկտրոնային միջոցների՝ մի քանի տասնամյակ առաջ ունեցած դերակատարումը: Տեխնոլոգիական նոր միջոցների շնորհիվ մենք ցանկացած վայրում, ժամին և եղանակով ստանում և սպառում ենք ցանկացած տեղեկատվական նյութ: Համակարգիչը արդեն վաղուց դուրս է բերել տեքստը նյութի սահմաններից, իսկ համացանցն ու էլեկտրոնային հաղորդակցման միջոցները հանել են տեղեկատվության վրա դրված տարածքային սահմանափակումները: Նոր թվային տեխնոլոգիաները դարձել են գիտելիքի և տեղեկատվության գոյության նոր ձևեր և ազդել են հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա: Գրադարանները բացառություն չեն: Գրադարանագիտության ոլորտում ի հայտ են եկել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են թվային գրադարաններ, էլեկտրոնային գրացուցակներ, գրադարանային գործընթացների ավտոմատացում, մեքենաընթեռնելի քարտագրում և այլն: Սրանք հասկացություններ են, առանց որոնց ժամանակակից գրադարանները այլևս հնարավոր չէ պատկերացնել: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Էլեկտրոնային գրացուցակը, ինչպես և ավանդական թղթային գրացուցակը, ստեղծվում է քարտագրման արդյունքում¹, սակայն ունի մեկ առավելություն՝ հասանելի է օրվա բոլոր ժամերին (365/7/24)՝ մոտեցնելով գրադարանային հավաքածուն ընթերցողի սեղանին, տալով մշտական մատչելի տեղեկատվություն:

Ժամանակակից էլեկտրոնային գրացուցակը բաղկացած է երեք հիմնական մասից՝ մատենագիտական տեղեկություններ պարունակող մաս, նյութի մասին

¹ Քարտագրումը գործընթացների ամբողջություն է, որն ապահովում է գրադարանային գրացուցակների ստեղծումը և գործունակությունը:

տեղեկություն պարունակող մաս և հեղինակավոր (օժանդակ) տեղեկություններ պարունակող մաս: Ըստ էության ավանդական (թղթային) գրացուցակն իր բովանդակությամբ, տարբեր ճյուղավորումներով սահուն արտացոլված է էլեկտրոնային գրացուցակում: Այսօր կներկայացնենք էլեկտրոնային գրացուցակի երրորդ՝ հեղինակավոր (օժանդակ) տեղեկություններ պարունակող մասում կատարվող աշխատանքները:

Հայաստանի ազգային գրադարանում առայժմ երեք շտեմարանների համար ստեղծվում են հեղինակավոր (օժանդակ) գրառումների շտեմարաններ:

Հայաստանի ազգային գրադարանը 2006 թ.-ից հայաստանյան մյուս գրադարանների հետ համատեղ ձևավորում է Հայաստանում ամենամեծ էլեկտրոնային համահավաք գրացուցակը, որտեղ արտացոլվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և աշխարհի բոլոր լեզուներով Հայաստանի գրադարաններում պահվող նյութերը: Ձեռնարկել է «Հայ գիրք» և «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանների ձևավորումը, որոնցում արտացոլվում են աշխարհի տարբեր երկրներում 1512 թ.-ից մինչև մեր օրերը տպագրված հայերեն, նաև հայատառ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքերը, հայերեն, հայատառ մամուլը, և օտարալեզու հայագիտական մամուլը: Շտեմարանները հավակնում են դառնալ հայերեն գրքերի, պարբերականների և հայ տպագրական արվեստի էլեկտրոնային հանրագիտարաններ:

Բազմակողմանի և լիարժեք շտեմարաններ ստեղծելու համար մեր գրադարանում աշխատանքներ են կատարվում հետևյալ ուղղություններով.

1. Հայ գրքի մատենագիտական շտեմարանի ստեղծում:
2. Հայ գրքի լրիվ տեքստային շտեմարանների ձևավորում:
3. Հայ և հայագիտական մամուլի մատենագիտական շտեմարանի ստեղծում:
4. Հայ և հայագիտական մամուլի լրիվ տեքստային շտեմարանների ձևավորում:
5. Գրադարանի ֆոնդերի և համալրվող գրականության շտեմարանի ստեղծում:

6. Հեղինակային գրառումների բազմալեզու շտեմարանի ստեղծում՝ երեք շտեմարաններում:
7. Աշխարհագրական անունների բազմալեզու շտեմարանի ստեղծում՝ երեք շտեմարաններում:
8. Կազմակերպությունների անունների բազմալեզու շտեմարանի ստեղծում՝ երեք շտեմարաններում:
9. Առարկայական խորագրերի հնգալեզու, այն է՝ (հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն) շտեմարանի ստեղծում՝ երեք շտեմարաններում:
10. Մատենագիտական գրառման միացում համապատասխանող գրքի և պարբերականի թվային պատճենին՝ «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններում:
11. Անձնանունային, աշխարհագրական, կազմակերպությունների անունների գրառումների միացում հայերեն Վիքիպեդիայում իրենց համապատասխանող մուտքին՝ «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններում:

Առաջինը աշխատանքներ են տարվել անձնանունային գրառումների մասում: Վերը նշված երեք շտեմարաններում արդեն կա 10.000-ից ավել անձնանունային գրառում: Ինտենսիվորեն ստեղծվում են առարկայական խորագրերի և աշխարհագրական անունների գրառումների շտեմարանները:

Առարկայական կամ թեմատիկ խորագրերը բոլոր գրացուցակների անբաժան մասն են: Առարկայական խորագրերի հեղինակավոր (օժանդակ) գրառումները ապահովում են լայն փնտրում ըստ նյութի թեմայի: Դրանց մեքենաընթեռնելի օժանդակ ցուցակի ստեղծումը հնարավորություն է տալիս բարձրացնել նյութերի ավտոմատացված մշակման որակը և օգտագործողների մատենագիտական սպասարկման մակարդակը: Վերը նշված երեք շտեմարաններում ստեղծվել են 2000-ից ավել առարկայական խորագրեր: Առաջնայանությունը տրվել է հայոց պատմությանը, հայ գրականությանը, հայոց լեզվին , մշակույթին վերաբերող թեմաներին: Հայոց պատմությունը ներկայացվել է և՛ ըստ ժամանակային

բաժանման, օրինակ՝ Հայաստան--Պատմություն--1522-1800) (Տե՛ս նկ. 1) , և՛ ըստ թագավորական դինաստիաների գահակալման ժամանակաշրջանների, օրինակ՝ Հայաստան --Պատմություն--Արշակունյաց թագավորություն, 66-428 թ. (տե՛ս նկ. 2), և՛ ըստ օտարների տիրապետության տակ եղած ժամանակաշրջանների, օրինակ՝ Հայաստան --Պատմություն--Արաբական տիրապետություն, 640-885 թթ.) (տե՛ս նկ. 3), և՛ ըստ հայոց համար ճակատագրական պայմանագրերի ու կոնֆերանսների, օրինակ՝ Սևրի պայմանագիր (1920 թ), Լոզանի կոնֆերանս, (1922-1923 թ.) (տե՛ս նկ. 4 և 5), և՛ ըստ տեղի ունեցած ճակատամարտերի (օր.՝ Ավարայրի ճակատամարտ, 451 թ.) (տե՛ս նկ. 6): Ստեղծվել են նաև հայկական բոլոր կոտորածների առարկայական խորագրերը (Հայկական կոտորածներ, 1894-1896 (տե՛ս նկ. 7); Հայկական կոտորածներ, 1909), Հայոց ցեղասպանություն, 1915-1923 (տե՛ս նկ. 8); առարկայական խորագրով փնտրումը կարտածի Հայոց ցեղասպանությանը վերաբերող բոլոր գրքերը²:

Տուրք տալով հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության 350 ամյակին գրեթե ավարտին ենք հասցրել Աստվածաշնչյան թեմաներին վերաբերող խորագրերը: Աստվածաշունչը յուր բոլոր մասերով՝ Հին Կտակարան, Նոր Կտակարան, Երգ երգոց, Մարգարեական գրքեր, Իմաստասիրական գրքեր, Գործք առաքելոց , Գիրք առակաց, Ավետարաններ, Ավետարան ըստ Հովհաննեսի, Ավետարան ըստ Ղուկասի, Ավետարան ըստ Մատթեոսի, Ավետարան ըստ Մարկոսի , Հնգամատյան՝ Գիրք ելից, Թվեր, Ծննդոց, Երկրորդ օրենք, Ղևտական և այլն, արտացոլված է մեր հեղինակավոր (օժանդակ) գրառումների համընդհանուր վերնագրերի մասում (մի քանի օրինակ տե՛ս նկ. 9 և 10): Ընդհանուր առմամբ Աստվածաշունչը յուր մասերով և Աստվածաշնչին վերաբերող այլ թեմաներով ՝ Աստվածաշունչ – Ուսումնասիրու- թյուններ; Աստվածաշունչ – Կանոնական քննադատություն և այլն, մեր երկու շտեմարանում ներկայացված է 38 թեմայով, որը վերջնական չէ: Համահավաք գրացուցակում ընթերցողը կարող է ծանոթանալ հայաստանյան գրադարաններում առկա Աստվածաշնչերին և նրա մասերին, իսկ «Հայ գիրք» շտեմարանում՝

² Թեմատիկ խորագրերի բազմազանությանը կարող էք ծանոթանալ haygirk.nla.am կայքում

աշխարհում տպված առայժմ մեզ հայտնի Աստվածաշնչերին և նրան առնչվող գրականությանը: Աստվածաշունչը տարբերվում է նրանով, որ և վերնագիր է , և թեմա: Այսպիսի թեմաները MARC21 ստանդարտում կոչվում են համընդհանուր վերնագրեր ³: Նույն մոտեցումն է նաև Ղուրանի, Ավեստայի, Թալմուդի նկատմամբ: Այս շարքին են դասվում նաև էպոսները, որոնց գրառումները ևս մեր շտեմարաններում արտացոլված են, օրինակ Սասնա ծռերը յուր մասերով՝ Սանասար և Բաղդասար, Մեծ Միեր, Սասունցի Դավիթ, Փոքր Միեր, Ռուլանդի երգը և այլն: Այս դասին են պատկանում նաև Վեդաները՝ Վեդաներ--Ռիգվեդա , Վեդաներ--Սամավեդա: Հայ առաքելական եկեղեցին և առայժմ նրա երկու թեմերը՝ Արցախի և Այրարատյան թեմերը ևս իրենց հեղինակավոր գրառումն ունեն մեր շտեմարաններում, այս թեմային կցվելու են եկեղեցու մասին հրատարակությունները:

Առարկայական խորագրերի գրառումները պարունակում են մատենագիտական տեղեկություններ, օրինակ, թե տվյալ խորագիրը ենթաթեմա է, թե գլխավոր թեմա, ինչպես պետք է քարտագրողն այն օգտագործի, եթե ենթաթեմա է, ապա ինչպիսի գլխավոր թեմաների հետ պետք է օգտագործել, բերված է կիրառման մեկ կամ երկու օրինակ, նաև կա հղում դեպի հայկական Վիքիպեդիա:

Մեծ ուժերով աշխատում ենք նաև աշխարհագրական անունների գրառումներ ստեղծելու ուղղությամբ՝ հիմնականում քաղաքների և պետությունների: Մեր տարբեր շտեմարաններում դրանք տարբեր կիրառություններ ունեն: «Հայ մամուլ» շտեմարանում դրանք կիրառվում են զուտ վիճակագրական նպատակներով՝ պարզելու, թե որ երկրում, կամ որ քաղաքում քանի անուն պարբերական է հրատարակվել, Համահավաք գրացուցակում ունեն բուն կիրառություն, այն է՝ թեմատիկ, «Հայ գիրք» շտեմարանում կիրառվում են երկու նպատակներով միաժամանակ: Աշխարհագրական անվան գրառման մեջ օգտագործողը կարող է տեսնել թե քաղաքը երբ է հիմնադրվել, ով է հիմնադրել, որ պետության մաս է կազմում, ում պատվին է ստացել իր անունը, մայրաքաղաք է, թե վարչական կենտրոն, նախկինում ինչ անուններ է ունեցել, ինչ

³ Համընդհանուր վերնագրերի տակ դասակարգվում են հեղինակ չունեցող գործերը՝ օր.՝ Աստվածաշունչ, Թալմուդ, էպոսներ, պայմանագրեր, համակարգչային ծրագրեր և այլն

տարընթերցումներ ունի հայերեն և ինչպես է գրվում առնվազն 5 լեզվով և այլ նման մատենագիտական տեղեկություններ:

«Հայ մամուլ» շտեմարանում արդեն ավարտին են մոտենում այն օտար քաղաքների գրառումների ստեղծման աշխատանքները, որոնցում առավել ակտիվ է եղել հայ գրատպությունը: Ամբողջովին ավարտված է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Թուրքիայի՝ նախկինում հայաբնակ քաղաքների հեղինակավոր (օժանդակ) գրառումների աշխատանքները (1 օրինակ տե՛ս նկ. 11): Այս շտեմարանի բոլոր գրառումները արտացոլված են նաև Համահավաք գրացուցակում և «Հայ գիրք» շտեմարանում: Հարկ է նշել, որ հեղինակավոր գրառումների շտեմարանը պետք է վերածել ազգային շտեմարանի: Եթե առանձին գրադարաններ, ստեղծեն յուրաքանչյուրն իրենց գրառումները, այդ գործընթացը հաջող ընթացք չի ունենա՝ հաշվի առնելով և՛ ժամանակի և՛ աշխատուժի կորուստը: Հեղինակավոր գրառումները պետք է նպաստեն տարբեր գրադարանների գրացուցակների նույնականացմանը, դրանով ավելի հեշտացնելով օգտվողի խնդիրը: Եթե գրադարանները ամեն մեկը ստեղծում է իր հեղինակավոր (օժանդակ) գրառումների թեզաուրուսը⁴, ապա դա հեղինակավոր է դառնում միայն այդ գրադարանի համար, ինչը չի նպաստում նյութի նկարագրման միասնական մշակմանը և գրառումների փոխանակմանը: Արտասահմանյան երկրներում ազգային հեղինակավոր (օժանդակ) գրառումների ստեղծման աշխատանքով զբաղվում են ազգային գրադարանները, ինչը պայմանավորված է նրանց ունիվերսալ ֆոնդերով, բարձր որակավորում ունեցող մասնագետներով և նյութական միջոցներով:

Հեղինակավոր գրառման առկայությունը հնարավորություն է տալիս օպտիմալացնել քարտագրողի աշխատանքը, էլեկտրոնային գրացուցակում ավելի դյուրին դարձնել փնտրումը մեկ կամ կոլեկտիվ հեղինակով, մատենաշարով, թեմայով և նույնիսկ համընդհանուր տասնորդական դասակարգման ինդեքսով: Հայաստանի ազգային գրադարանն արդեն ստանձնել է այդ պատասխանատու և

⁴ Տեղեկատվական տեխնոլոգիաներում թեզաուրուսը ներկայացնում է սեմանտիկորեն օրթոգոնալ որոնման բանալիներ - ռի տվյալների շտեմարան կամ ցանկ: Արհեստական ինտելեկտի բնագավառում թեզաուրուսը երբեմն կարող է հղվել որպես օնթոլոգիա :

ոչ այդքան դյուրին գործը , որն անխոս իր կարևոր տեղը կզբաղեցնի հայկական գրադարանա- գիտության մեջ:

Պատկերային հավելված

Նկ.1

Geographic Name:
Հայաստան Պատմություն 1522-1800
used for/see from:
Armenia History 1522-1800
Armenien Geschichte 1522-1800
Arménie Histoire 1522-1800
Армения История 1522-1800
see also:
[Հայոց պատմություն](#) (Broader heading)
[Հայաստան Պատմություն](#) (Broader heading)

Նկ.2

Geographic Name:
Հայաստան Պատմություն Արշակունյաց թագավորություն, 66-428 թթ.
used for/see from:
Հայաստան Պատմություն Արշակունիների թագավորություն, 66-428
Հայաստան Պատմություն Արշակունիների դինաստիա, 66-428
Հայաստան Պատմություն Արշակունյաց դինաստիա, 66-428
Armenia History Arsacid (Arshakuni) dynasty, 66-428
Armenien Geschichte Arsakidische Herrschaft, 66-428
Arménie Histoire Dynasties des Arsacides, 66-428
Армения История Аршакидская династия, 66-428
see also:
[Հայոց պատմություն](#) (Broader heading)
[Հայաստան Պատմություն](#) (Broader heading)
[Հայաստան թագավորներ և կառավարիչներ](#) (Broader heading)

Նկ. 3

Geographic Name:
Հայաստան Պատմություն Արաբական տիրապետություն, 640-885 թթ.
used for/see from:
Armenia History Arab period, 640-885.
Армения История Арабский период, 640-885.
see also:
[Հայոց պատմություն](#) (Broader heading)
[Հայաստան Պատմություն](#) (Broader heading)

Նկ. 4

Uniform Title:

Սևրի պայմանագիր (1920 թ.)

used for/see from:

Սևրի հաշտության պայմանագիր (1920 թ.)
Treaty of Sèvres (1920)
Vertrag von Sèvres (1920)
Traité de Sèvres (1920)
Tratado de Sèvres (1920)
Севрский мирный договор (1920)

see also:

Հայոց պատմություն (Broader heading)
Լոզանի պայմանագիր (1923)
Պայմանագրեր (Broader heading)
Հայաստանի Պատմություն 1901- (Broader heading)

Նկ. 5

Meeting Name:

Լոզանի կոնֆերանս (1922-1923)

used for/see from:

Լոզան (Շվեյցարիա) Կոնֆերանս (1922-1923)
Lausanne Conference (1922-1923)
Conference of Lausanne (1922-1923)
Conférence de Lausanne (1922-1923)
Лозаннская конференция (1922-1923)

see also:

Հայոց պատմություն (Broader heading)
Հայաստանի Պատմություն 1901- (Broader heading)

Նկ. 6

Topical Term:

Ավարայրի ճակատամարտ, 451 թ.

used for/see from:

Battle of Avarayr, 451
Schlacht von Avarayr, 451
Аварайрская битва, 451

see also:

Վարդանանց պատերազմ, 450 - 451
Հայաստանի Պատմություն 428 - 640 (Broader heading)
Իրանի Պատմություն Մինչ 640 թ. (Broader heading)

Նկ. 7

Topical Term:
Հայկական կոտորածներ, 1894-1896
used for/see from:
 Armenian massacres, 1894-1896
 Hamidian massacres
 Massacres d'Arméniens, 1894-1896
 Massaker an den Armeniern, 1894–1896
 Массовые убийства армян , 1894-1896
 Хамидийская резня
see also:
[Հայկական հարց](#) (Broader heading)
[Հայաստանի Պատմություն 1801-1900](#) (Broader heading)

Նկ. 8

Topical Term:
Հայոց ցեղասպանություն, 1915-1923
used for/see from:
 Մեծ եղեռն, 1915-1923
 Armenian genocide, 1915-1923
 Armenian Genocide, 1915-1923
 Völkermord an den Armeniern, 1915-1923
 Armenischer Genozid, 1915-1923
 Génocide arménien, 1915-1923
 Геноцид армян, 1915-1923
see also:
[Հայկական հարց](#) (Broader heading)
[Համաշխարհային պատերազմ, 1914-1918 Վայրագություններ](#) (Broader heading)
[Ցեղասպանություն](#) (Broader heading)
[Հայաստանի Պատմություն 1901-](#) (Broader heading)

Նկ. 9

Uniform Title:
Աստվածաշունչ
used for/see from:
 Աստուածաշունչ
 Աստվածաշունչ մատյան
 Աստուածաշունչ մատեան
 Սուրբ Գիրք
 Գիրք Գրոց
 Bible
 Bibel
 Buch der Bücher
 Библия

Uniform Title:

Աստվածաշունչ : Ավետարան ըստ Ղուկասի

used for/see from:

Աստվածաշունչ : Նոր Կտակարան : Ավետարան ըստ Ղուկասի
Աստուածաշունչ : Նոր Կտակարան : Աւետարան ըստ Ղուկասու
Աստուածաշունչ : Աւետարան ըստ Ղուկասու
Ավետարան ըստ Ղուկասի
Աւետարան ըստ Ղուկասու
Bible. New Testament. Gospel of Luke
Bible. New Testament. Gospel According to Luke
Bible. Gospel of Luke
Bible. Gospel According to Luke
Bible. Luke
Gospel of Luke
Gospel According to Luke
Gospel According to Saint Luke
Bibel. Neues Testament. Evangelium nach Lukas
Bibel. Neues Testament. Lukasevangelium
Bibel. Evangelium nach Lukas
Bibel. Lukasevangelium
Evangelium nach Lukas
Lukasevangelium
Bible. Nouveau Testament. Évangile selon Luc
Bible. Évangile selon Luc
Évangile selon Luc
Библия. Новый Завет. Евангелие от Луки
Библия. Евангелие от Луки
Евангелие от Луки
Εὐαγγέλιον κατὰ Λουκάν

see also:

Աստվածաշունչ Ավետարաններ (Broader heading)
Աստվածաշունչ : Նոր Կտակարան

Geographic Name:

Երևան

used for/see from:

Երեվան
Երեւան
Յերևան
Յերեվան
Յերեւան
Յրեվան
Էրեւան
Էրեվան
Էրիվան
Էրեբունի-Երևան
Էրեբունի
Yerevan
Yerewan
Erevan
Erewan
Ereván
Eriwan
Erivan
Jerevan
Erebooni
Ērebuni
Ayrivan
Rewan
Revan
Irwan
Ереван
Эривань